



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌԻ ՄԱՐԶՊԵՏ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հուլիսի 2019թ. թիվ 479-Ա

**ՆՈՒՆԵ ԴԵՐԵՆԻԿԻ ԷՎԻՆՅԱՆԻՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» ՊՓԲԸ-Ի
ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշմամբ հաստատված կարգի 71-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետարանի ենթակայության տակ գտնվող հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2019 թվականի հուլիսի 24-ի թիվ 5 որոշումը, հաշվի առնելով Ն. Էվինյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Նունե Դերենիկի Էվինյանին նշանակել «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ի տնօրեն և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով 2019 թվականի հուլիսի 26-ից:

2. Ն. Էվինյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

ՀՀ ԼՈՌԻ ՄԱՐԶՊԵՏ

25/07/19


ԱՎԿԱՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. հուլիսի 25
ք.Վանաձոր